


Ա. Ս. ՂԱՐԻՔՅԱՆ
(Մենդյան 80-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ քղրակից անդամ Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Լրացավ նշանավոր հայագետ Ա. Ս. Ղարիքյանի ծննդյան 80 տարին։ Երկու տարի է արդեն, ինչ ավելուով լի գիտնականը հրաժեշտ է տվել կյանքին, Բայց նա նշանակալից հետք է թողնւլ այն բնագավառներում, որտեղ



գործադրել է իր ընդունակություններն ու գիտական պաշարը։

Արարատ Ղարիքյանը Երևանի պետական համալսարանի առաջին սաներից էր, մեկը այն երջանիկ մարդկանցից, որոնք բախտ ունեցան ունկնդրելու ժամանակի հայագիտության փառքը ներկայացնող մեծ գիտնականներին՝ Մ. Աբեղյանին, Հ. Աճառյանին, Հ. Մանանդյանին, Ա. Տերտերյանին, Գ. Ղափանցյանին և այլոց։ Համալսարանի ասպիրանտուրայում ուսումնառությունը

շարունակել է Հ. Աճառյանի գիտական ղեկավարությամբ (1928—1931 թթ.)։ Այդ շրջանում Ա. Ղարիքյանը գործուղվել է Լենինգրադ՝ ունկնդրելու սովետական հռչակավոր գիտնական ակադ. Ն. Յա. Մառի դասախոսությունները և մոտիկից ծանոթանալու նրա գիտական աշխատանքին։ Հետագայում այս երկու ականավոր գիտնականների օգնությամբ յուրօրինակ կերպով է արտահայտվել Ա. Ղարիքյանի գիտական գործունեության մեջ։

Ստանալով հիմնավոր պատրաստություն՝ Ա. Ղարիքյանն աշխատանքային բեղմնավոր գործունեություն է ծավալում։ 1929—1948 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում։ 1934 թ. կապվել է Երևանի հայկական մանկավարժական (հետագայում՝ Խ. Աբովյանի անվան) ինստիտուտի հետ՝ այնտեղ դասավանդելով մինչև իր կյանքի վերջը։ Որպես դասախոս զուգահեռաբար աշխատել է նաև Թբիլիսիի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնում, Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում, Երևանի ռուսական մանկավարժական, Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական, Երևանի հեռուկա մանկավարժական ինստիտուտներում։ Դասախոսել է հայ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, հայոց լեզվի դասականի մեթոդիկա, հայերենի և ռուսերենի զուգադրական քերականություն և այլն։ Նրա հազարավոր ուսանողներ այժմ աշխատում են ժողովրդական կրթության, մշակույթի, գիտության և այլ բնագավառներում։ Ղեկավարել է բաղմաթիվ ասպիրանտ-

ների, որոնք պաշտպանել են թեկնածուական, ոմանք էլ՝ ղոկոտորական դի-
սերտացիաներ:

Իր շուրջ կեսդարյա զործունեության ընթացքում Ա. Ղարիբյանը վարել է մի շարք պաշտոններ: 1934 թ. կազմակերպել և 26 տարի անընդմեջ (մինչև 1960 թ.) ղեկավարել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը: Եղել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի (հետագայում՝ Հ. Աճառյանի անվան) ինստիտուտի առաջին գիրեկտորը: Այս պաշտոնում աշխատել է 1944—1950 և ապա 1956—1962 թթ.: Ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ գրադարանա-
լին խորհուրդը և հիմնականում գրադարանը: 1958—1961 թթ., ապա 1964—
1977 թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժան-
մունքի սկզբնական քարտուղարի տեղակալ: 1955—1967 թթ. ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի, գրականության և արվեստի ինստիտուտների գիտական
աստիճաններ շնորհող միացյալ գիտական խորհուրդը և այլն:

Ա. Ղարիբյանը գիտական ասպարեզ իջավ որպես հայոց լեզվի պատմա-
բան: Նրա առաջին աշխատանքները վերաբերում են հենց այս բնագավառին: Բարձրագույն դպրոցների ուսանողության համար կազմել է հայոց լեզվի
պատմության դասընթացի առաջադրանքներ, ապա փոխել է ուրվագծել հա-
յոց լեզվի պատմությունը առանձին գրքով՝ «Հայոց լեզվի պատմության նե-
րածություն» վերնագրով (1935 թ.), որը վերամշակելով ու ընդլայնելով՝ եր-
կու տարի անց հրատարակել է «Հայոց լեզվի պատմության ուսումնասի-
րության ներածություն» անվանումով: Սա էլ եղավ նրա ամենածավալուն
գործը հայոց լեզվի պատմությունից, որն արտացոլում է ոչ միայն հեղինակի
գիտական նախասիրությունները, այլև նրա վաղ շրջանի լեզվաբանական
հայացքները:

Գրքում Ա. Ղարիբյանի որդեգրած կամ սուռչ քաշած դրույթների հիմնա-
կան մասը վաղուց արդեն հնացած է և չի ընդունվում ժամանակակից լեզվա-
բանության մեջ: Սակայն հեղինակը կամեցել է ստեղծել փոքրիշատե ամբող-
ջական դասընթաց՝ համառոտակի ներկայացնելով հայոց լեզվի անցած ուղին՝
սկսած նախնական ժամանակներից մինչև դարիս երեսնական թվականները:
Եթե վերանանք այն դրույթներից, որոնք արդյունք էին Ն. Յա. Մառի լեզվի
նոր ուսմունքի անվերապահ ընդունման ու կիրառման, և ձգտենք արժեքա-
վորել այս աշխատությունը, ապա պիտի կանգ առնենք նրա փաստական հենքը
կազմող նյութերի վրա, որոնք վերաբերում են գրաբարի, միջին հայերենի,
բարբառների և աշխարհաբար գրական հայերենի կառուցվածքային իրողու-
թյուններին և պատմական հաջորդականությամբ զգալի պատկերացում են
տալիս հայոց լեզվի անցած ուղու մասին: Ուսումնասիրության մեջ ուշադրա-
վել են հայերենի տարբեր դրսևորումների տիպաբանական բնութագրումները:

Այս բնագավառին վերաբերող սկզբնական շրջանի աշխատություններից
է «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական ար-
ժեքը» ուսումնասիրությունը¹, որի համար 1937 թ. (առաջինը Հայաստանում)
ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:
Աշխատությունը պարունակում է շատ արժեքավոր նյութ: Հայոց լեզվի պատ-
մական տարբեր շրջանների՝ գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի,

¹ ՀՍՍՀ Կոմունիստի պատմության ինստիտուտի «Աշխատություններ», Երևան, 1935,
թատ. 1:

ինչպես նաև բաղմաթիվ բարբառների հետադոտումով վեր են հանված ու ցուցադրված հոգնակի նշանակող մի քանի տասնյակ մասնիկներ՝ իրենց իմաստային նրբություններով ու բաղմաղանությամբ։ Ուսումնասիրողը չի սահմանափակվել մասնիկների սոսկ հոգնակիության դերի նշումով։ Նրան հետաքրքրել է նաև դրանց ձևաիմաստային պատմական զարգացման ընթացքը և հատկապես բառափոփական ու բառակաղմական արժեփոխումները ամբողջ հայերենի մեջ։ Աշխատության հիմնական և զրակացությունը բխում է հայոց լեզվի առաջացման վերաբերյալ հեղինակի՝ ժամանակին ունեցած հայացքներից։ Հայերենի հոգնակիության ձևույթների բաղմաղանությունը այստեղ դիտվում է որպես արդյունք հայոց լեզվի մեջ բաղմաթիվ ցեղային լեզուների համակենտրոնացման։

Հայոց լեզվի պատմության, ինչպես նաև պատմական քերականության հարցերը գիտնականի տեսագաշտում են մնում նրա գիտական գործունեության զրեթե ողջ ընթացքում։ Հետագայում նա հրատարակել է այս բնագավառին վերաբերող մի շարք աշխատություններ։

Հիսնական թվականներից Ա. Ղարիբյանը վերանայում է իր հայացքները հայոց լեզվի պատմության տեսական հարցերում և ավելի մոտ է կանգնում ավանդական լեզվաբանությանը։ Ա. Ղարիբյանը հաճախ անդրադարձել է նաև գրական լեզվի զարգացման ու մշակման գործում խոշոր դեր կատարած որոշ այնպիսի առաջավոր գործիչների ժառանգությանը, որոնք մեծ հետք են թողել մեր լեզվի պատմության մեջ։ Որպես օրինակ հիշենք հետևյալները. «Մ. Նալբանդյանի լեզվաբանական և լեզվամշակման հայացքները»², «Խաչատուր Աբովյանի տեղը հայ գրական լեզվի պատմության մեջ»³ և այլն։

Գիտահետադոտական աշխատանքների ասպարեզում առավել նշանակալից է Ա. Ղարիբյանի վաստակը հայ բարբառագիտության մեջ։ Վերջինս որպես հայերենագիտության մի ուրույն ճյուղ հարստացրեց ու դասական մշակման հասցրեց Հ. Աճառյանը՝ միաժամանակ այս ուղղությամբ բացելով հետադոտման լայն հեռանկարներ։ Դրա բնորոշ ապացույցը նրա մի շարք աշակերտների (Ա. Ղարիբյան, է. Աղայան, Գ. Զահուկյան և ուրիշներ) անուրանալի աշխատանքն է տվյալ բնագավառում։ Ա. Ղարիբյանի բարբառագիտական գործունեությունը մի նոր փուլ կարելի է համարել այս գիտաճյուղի մեջ։ Նրա աշխատանքն ընթացել է մի կողմից գիտական մշակման չենթարկված բարբառային նյութի (առանձին բարբառների ու խոսվածքների) նկարագրման, մյուս կողմից՝ տեսական հարցերի քննարկման ճանապարհով։ Առանձնապես պետք է ընդգծել նրա աշխատանքը մեր բարբառների դասակարգման գործում, ինչպես նաև շուրջ մեկուկես տասնյակ այնպիսի բարբառների ուսումնասիրությունը, որոնք մինչ այդ չէին նկարագրվել ու գիտության սեփականությունը դարձվել։

Հիշենք հեղինակի՝ այս բնագավառին վերաբերող մի քանի ուշագրավ աշխատություններ։ Առաջին կարևոր ուսումնասիրությունը՝ «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» խորագրով, հրատարակվեց 1939 թ.⁴։ Դա մի արժե-

² «Սովետական գրականություն և արվեստ», Երևան, 1954, № 12։

³ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», 1957, հատ. 6։

⁴ Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 11։ Այլև՝ առանձին։

քաղաքի նորությունն էր հայ բարբառագիտության մեջ: Այստեղ էականը հայ բարբառների մի նոր ճյուղի («ս») զոյություն գիտական հիմնավորումն ու ցուցադրումն էր՝ համապատասխան մի շարք բարբառների նկարագրումով ու փաստական նյութի ամրագրումով: Այս աշխատանքի համար Ա. Ղարիբյանին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի գիտական ստատիճան (դարձյալ առաջինը Հայաստանում):

Ելնելով իր դիտարկած փաստական նյութից, հետազոտող պիտանականը վերանայում, խորացնում է հայերենի բարբառների ձևաբանական դասակարգումը՝ սուանձին տեղ հատկացնելով իր իսկ հայտնաբերած «ս» ճյուղին: Ընդ այդ հաշվին բարբառների դասակարգման գիտական վերջին խոսքը պատկանում էր Հ. Աճառյանին, որը դեռ 1909 թ. հանդես եկավ ֆրանսերեն գրված մի աշխատությամբ՝ նվիրված մեր բարբառների դասակարգմանը: Դա հետագայում ընդլայնվեց, երկու տարի անց հրատարակվեց հայերեն: Հեղինակն առաջարկում էր բարբառների ձևաբանական դասակարգում՝ բայի սահմանական եղանակի ներկա (ինչպես և անցյալ անկատար) ժամանակի կազմության առանձնահատկությունների հիմունքով: Ըստ այդմ նա հայերենի բարբառները բաժանել է երեք ճյուղի՝ «ում» (7 բարբառ), «եր» (21 բարբառ), «ել» (3 բարբառ): «ել» ճյուղի մեջ նկարագրել է իր իսկ վկայություններ մինչ այդ բոլորովին չնկարագրված Մարաղայի, Խոյի և Արթվինի բարբառները՝ Խոյի բարբառի հետ իրեն նրա ենթաբարբառ նշելով նաև Ուրմիայի բարբառը. ավելի ուշ Հ. Աճառյանն այս ճյուղի մեջ ընդգրկում է նաև Մեղրու և Հավարիկի բարբառները («Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, էջ 355—360): Երկված բարբառային նմուշներից էլ երևում է, որ դրանք, որոշ ընդհանուր գծերով հանդերձ, ունեն էական տարբերություններ: Այստեղ երևում է նաև «ս» ճյուղը, որի վրա հետագայում ուշադրություն է բեկում Ա. Ղարիբյանը: Իր վերոհիշյալ աշխատության մեջ նա նախ ճշտում է «ել» ճյուղի անվանումը՝ պատճառաբանելով, որ բայի սահմանական եղանակի ներկա (ու անցյալ անկատար) ժամանակի կազմության մեջ անկատար դերբայի դերում հանդես է գալիս անորոշ դերբայը, իսկ սա ունի նաև ալ մասնիկ (կրէլ, կառթալ, ներկա ժամանակ՝ կրէլ էմ, կառթալ էմ), ուստի դերբայի համար ընդհանուրը լ-ն է, որով և ուրիշ անվանվի համապատասխան ճյուղը: Այդ ճյուղից առանձնացնում է Արթվինի բարբառը և որպես իր կողմից նոր առաջարկվող ճյուղի հատկանիշներն ունեցող բարբառ. ընդարձակում է նրա նկարագրությունը ու միացնում գիտության համար նորահայտ հինգ բարբառներին: Դրանք են՝ Մեղրու, Հաղրութի, Ուրմիայի, Շատախի, Կարճևանի բարբառները: Նա ելնում է վերը նշված ձևաբանական սկզբունքից՝ ճյուղի անվանման համար հիմք ընդունելով ներկա ժամանակի կազմության մեջ հանդես եկող անկատար դերբայի մասնիկի վերջին ընդհանուր հնչյունը՝ ս-ն՝ նկատելով, որ այդ դերբայը համապատասխան բարբառների մեջ ներ-

5 Ավելի առաջ (1856 թ.) Ա. Այտրնյանը կատարել էր աշխարհագրական դասակարգում: Իսկ Ք. Պատկանյանը, աշխարհագրական հիմունքով մեր բարբառները բաժանելով արևելյան և արևմտյան խմբերի, միաժամանակ նշել էր նաև նրանց ձևաբանական տարբերակիչ որոշ հատկանիշներ՝ առաջին խմբի համար ներդոյական հոլովի և բայի սահմանական եղանակի ներկա ու անցյալ անկատար ժամանակաձևերի -ում մասնիկը, երկրորդ խմբի համար՝ -կր (կու, կի, կ) բայական մասնիկները (ներկա և անցյալ անկատարի ձևերում): Տե՛ս նրա «Исследование о диалектах армянского языка» աշխատությունը, СПб, 1869, էջ 17:

կայանում է իր ձևավորման ընթացքով: Ավելի լրիվ ու սկզբնականին մոտ ձևը Արթվինի բարբառում է՝ մնալիս, ապա գալիս են մյուս ձևերը հետևյալ տեսքով՝ մնալիս (Շաղախ), մնալ, մնալս (Կարձեան), մնաս (Մեղրի, Հաղ-րութ, Ուրմիս): Այնուհետև ձգտում է ցույց տալ այդ սահմանվող ճյուղի բարբառների կառուցվածքային այլ ընդհանուր հատկանիշներ: Դրան հետևում են բարբառների նկարագրությունները համապատասխան նմուշներով ու բառացանկերով: Այսպիսով հայ բարբառագիտությունը զգալիորեն առաջ տարվեց: Երեք ճյուղերը համալրվեցին շորորոգով, իսկ մինչ այդ նկարագրված և դիտության համար կորստից փրկված բարբառների վրա ավելացան ևս հինգը:

Բարբառային ճյուղերի որոնման աշխատանքը սրանով չսպառվեց: Ա. Ղարիբջանը այս ուղղությամբ շարունակեց իր հետազոտությունները: Արդյունքը եղավ այն, որ նա հետագայում գիտության համար սահմանեց ու ցուցադրեց «կս» և «հա» ճյուղերը: Այս դեպքում էլ նա կատարեց որոշ բարբառների ճյուղային պատկանելության վերանայումներ, ինչպես նաև բարբառների նոր նկարագրություններ:

1940 թ. հրատարակված «Ժողովրդական լեզվի մի հնագույն վկայության մասին»⁶ աշխատության մեջ գիտնականը, հենվելով Անանուն Մեկնիչի մի վկայության վրա, քննում է պատմական բարբառագիտության հարցեր: Այստեղ նրան հետաքրքրել են բարբառների հնչյունական յուրահատկությունների պատմական դրսևորումները: Նկատի ունենալով Անանունի վկայած բազուկ, պազուկ, փազուկ հնչումները իր ժամանակներում (մոտավորապես VIII դար)՝ Ա. Ղարիբջանը ձգտում է ցույց տալ, թե մեր ժամանակներում հայտնի հայերեն որ բարբառները կարող էին լինել դրանք:

Բարբառագետի մտահղացումների մեջ գնալով ավելի ու ավելի հասունանում է հայ բարբառների հնչյունական դասակարգման հարցը: Եվ ահա 1941 թ. հանդես է գալիս դրան նվիրված նրա «Հայերեն բարբառների դասակարգման խնդիրը» աշխատությունը⁷: Այստեղ հիմնավորելով ձևաբանական դասակարգման ճշգրտությունն ու գիտականությունը՝ հեղինակը միաժամանակ առաջարկում է բարբառների հնչյունական դասակարգում: Նա նշում է, որ կան շատ բարբառներ, որոնք, ձևաբանորեն ընդհանուր լինելով և ներառվելով մեկ ճյուղի մեջ, միևնույն ժամանակ տվյալ ճյուղի բարբառներից տարբերվում են հնչյունաբանորեն և ավելի մոտ են կանգնած ոչ նույն ճյուղի մեջ մտնող ուրիշ բարբառներին: Այս հանգամանքն էլ ստիպում է կատարել նաև հնչյունական դասակարգում, որի համար նա հիմք է ընդունում բառասկզբի պայթական և պայթաշփական բաղաձայնների համակարգային գոյությունը մեր բարբառներում: Կայուն և հիմնական համարելով զրաբարի եռաստիճան համակարգը (բ-պ-փ, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ, գ-կ-ք)՝ Ա. Ղարիբջանը բարբառներում դրա հանդեպ հանդես եկող փոփոխությունները գիտում է որպես տեղաշարժեր և տեղաշարժ-տեղափոխություն: Վերջիններիս պատկերով էլ դաս դասում է բարբառները հետևյալ կարգով. I բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժի ենթարկված (էրկաստիճան ձայնազուրկ)

⁶ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1940 թ., № 4—5:

⁷ Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», 1941 թ., հատ. 19:

բարբառներ (Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հաղրութի, Շաղախի, Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Վանի, Մոկսի)։ Այս խմբի մեջ կան ըստ ձևաբանական դասակարգման բոլոր չորս ճյուղերի ներկայացուցիչներ։ II բաղաձայնական համակարգի երկրորդ տեղաշարժով բարբառներ, սրոնց մեջ մտնում են՝ ա. երկաստիճան խլազուրկ համակարգով (Պոլսի, Եվդոկիայի, Ղրիմի, Տրապիզոնի), բ. եռաստիճան խլազուրկ (Համշենի, Սուրիայի, Ակնա, Արաբկիրի, Հաճընի, Շաուին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի, Սուշավայի), գ. բառաստիճան (Կարնո, Մշո, Երևանի և նոր Զուղայի) բարբառները։ Ինչպես տեսնում ենք, այստեղ բոլորն էլ «կը» ճյուղից են, միայն վերջին երկուսը՝ «ում» ճյուղից։ III բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխություն կրած բարբառներ, որոնց մեջ մտնում են՝ ա. երկաստիճան խլազուրկ համակարգ ունեցող բարբառներ (Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսթոյի, Նիկոմեդիայի), բ. միջին հայերենին համապատասխան համակարգով ենթաբարբառներ ու խոսվածքներ (Մարաշի, Զեյթունի)։ Բոլորն էլ «կը» ճյուղից են (իհարկե, ըստ մինչ այդ եղած դասակարգման)։ IV անտեղաշարժ (զրաբարի եռաստիճան համակարգ ունեցող) խումբ (Թբիլիսիի, Մեղրու, Կարձևանի և Արթվինի բարբառներ)։ Սրանցից էլ միայն Թբիլիսիի բարբառը «ում» ճյուղի է, իսկ մյուսները՝ «ս»։

Հեղինակը թեև տեղաշարժերի ու տեղաշարժ-տեղափոխության երևույթները դիտում է գրաբարյան համակարգի կլակետից, սակայն, վերջում եղրակացնում է, թե հիշյալ համակարգերով բարբառները եղել են ոչ թե գրաբարի պրական լեզու դառնալուց հետո, այլ՝ առաջ։

1947 թ. լույս տեսավ «Համառոտություն հայ բարբառագիտության» ծավալուն գիրքը, որին հաջորդեց նրա հիման վրա կազմված «Հայ բարբառագիտությունը» (1947 թ.)՝ հարմարեցված իբրև ձևական բարձրագույն դրսևորոցների ուսանողության համար։ Ինչպես հեղինակի, նույնպես և որոշ առումով նախորդ ուսումնասիրողներին՝ այս բնագավառում կատարած աշխատանքների յուրատեսակ ամփոփումն էր 1953 թ. լույս տեսած «Հայ բարբառագիտություն» մեծածավալ աշխատությունը, որն աչքի է ընկնում թե՛ հարուստ նյութով և թե՛ նրա տեսական մշակմամբ։ Այստեղ առանձնապես զնահատելի են բարբառների դասակարգման հետ կապված նորությունները։

Դրբի ներածական մասում Ա. Ղարիբջյանը վերանայում է իր որդեգրած տեսակետները հայոց լեզվի կազմավորման, բնույթի, բարբառների առաջացման և այլ հարցերի վերաբերյալ։ Ընդունում է, որ հայերենը հնդեվրոպական լեզու է, աղղակից այդ ընտանիքի մյուս լեզուներին, չի առաջացել խաչավորումով, նրա կառուցվածքը ստադիալ անցման արդյունք չէ, նրա բարբառները երբեմնի համադրված ու խաչավորված անկախ լեզուների վերադրուկները չեն, այլ գոյացել են նույն հայերենի լեզվական նյութի ձևափոխություններով և այլն։ Ընդգծում է, որ իր ուսումնասիրություններում մինչ այդ խոսվել է եղել փաստական նյութի և նրան վերաբերող տեսական և ընդհանրացումների ու մեկնաբանությունների միջև։ Հեղինակը հայ բարբառագիտության պատմության, բարբառագիտության էական կանոնների մա-

Յ Տե՛ս նույն տեղում, էջ 18։

• 9 Հմտ. «Հայ բարբառագիտություն», Երևան, 1953, էջ 34—35 և հտ.։

սին համառոտ գաղափար տալուց հետո անցնում է բարբառների դասակարգման խնդրին: Նա հիմնավորում ու ընդլայնում է ձևաբանական դասակարգումը և կատարում տիպաբանական դասակարգում: Վերաբարձում է «ս» ճյուղի հարցը և վերստին հաստատում նրա գոյությունը, նշում, որ այդ ճյուղի բարբառների ցանկը համալրվում է իր կողմից հայտնաբերված եւ երկու՝ Ղարադաղի և Դզմաշի բարբառներով: Անդրադառնալով «կը» ճյուղին՝ նկատում է, որ նրա մեջ մտնող բոլոր բարբառները ձևաբանական հատկանիշներով միատեսակ չեն և այդ ճյուղից առանձնացնում է «կա» ճյուղը՝ Ամասիայի, Զեյթունի, Բեյլանի, Սվեդիայի, Մարաշի բարբառներով, «հա» ճյուղը՝ Քեսաբի և Արաբկիրի բարբառներով, հոտորջուրինն էլ դիտում գրաբարատիպ: Նա մատնացույց է անում նաև միջճյուղային բարբառների գոյությունը: Այդպիսի ուղակում է տալիս Հավարիկի («ս-ում») և Ռբիլիսի («ու-կը») բարբառներին, ապա կատարում տիպաբանական դասակարգում, որը իր մեջ ընդգրկում է նախորդը: Ըստ այդմ, ընդունում է երեք խումբ՝ դեբրայավոր՝ «ում», «ս», «լ» ճյուղերով, մասնիկավոր՝ «կը», «հա», «կա» ճյուղերով և գրաբարատիպ (հիշենք նաև, որ անկախ կերպով համանման դասակարգում է կատարել պրոֆ. է. Աղայանը): Դրանից հետո առանձին հատվածով ներկայացվում է հնչյունական դասակարգումը՝ որոշ վերանայումներով՝ ըստ մինչ այդ նկատի չառնված նյութերի, ինչպես նաև վերոհիշյալ նոր դասակարգման:

Հեղինակին հետաքրքրել է նաև բարբառների ինքնուրույնության ճանաչման հարցը: Այս կապակցությամբ էլ առաջարկել է ենթաբարբառ որակվածներից մի քանիսը համարել ինքնուրույն բարբառներ՝ միաժամանակ զգուշացնելով, որ փաստերի ուշադիր ուսումնասիրման և լավ ստուգման պեպքում մինչ այժմ ներկայացված որոշ բարբառներ էլ կարող են դիտվել ենթաբարբառներ և այլն:

Հաջորդ «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958 թ.) գրքում բնութագրվում ու ներկայացվում են Արամուշի, Քաբուսիեի և Եղեսիայի բարբառները:

Ա. Ղարիբյանի բարբառագիտական աշխատանքն ամբողջացավ մի ձեռնարկովով, որը հեղինակին միջադժարյին ճանաչում բերեց: Նա գիտական բանավեճ սկսեց հայերենի և մասնավորապես հայ բարբառների բաղաձայնական համակարգի առաջացման շուրջը: Այդ բանավեճը դուրս բերվեց հանրապետության սահմաններից և ծավալվեց «Вопросы языкознания» պարբերականի էջերում: Ա. Ղարիբյանի հիմնադրույթն այն էր, թե հայերենի մի շարք բարբառների շնչեղ-ձայնեղ բաղաձայնները ուղղագծորեն պալիս են հնդեվրոպական հիմք լեզվից, որն ուներ քառաստիճան բաղաձայնական համակարգ, ուրիմն և նրա շնչեղ-ձայնեղներն են շարունակվում հայերենի մեջ: Խհարկե, այսպիսով նա վերանայում էր բարբառների հնչյունական դասակարգման որոշ դրույթներ: Բանավեճի ընթացքում եղան դեմ և թե՛ր կարծիքներ: Թեև խնդիրը լիակատար լուծում չստացավ, բայց հայերենը շահեց նրանով, որ այդպիսով որպես ուսումնասիրության առարկա արժարժվեց մեր ժամանակի առաջատար լեզվաբանների կողմից:

Ա. Ղարիբյանը զբաղվել է նաև ընդհանուր և պատմահամեմատական լեզվաբանության հարցերով: Դրա արգասիքն են նրա մի շարք հոդվածները՝

«Նիկողայոս Մառը և նրա լեզվի նոր ուսմունքը»¹⁰, «Из сравнительной фонетики армянского и славянских языков»¹¹, «Индоевропейский консонантизм в отражении армянских диалектов»¹², «Հայոց լեզվի դերն ու տեղը հնդեվրոպական լեզուների համակարգում»¹³ և այլն: Իհարկե, նման դեպքերում ևս նրան առավելապես հետաքրքրել են հայերենի հետ կապված հարցերը:

Մեծ են ու խիստ գնահատելի Ա. Ղարիբյանի ծառայությունները ժամանակակից հայոց լեզվի ուսուցման, նրա իրողությունների բացահայտման, վերջանման, հիմնավորման ու տարածման գործում: Հայ դպրոցի կյանքում նշանակալի երևույթ էր նրա հեղինակած՝ հայոց լեզվի քերականության դասագրքի երևան գալը¹⁴, որը ընդգրկում է հնչյունաբանությունը, ուղղագրությունը, բառադիտությունը (նախ՝ միայն բառակազմությունը) և ձևաբանությունը: Դասագիրքը բազմաթիվ վերահրատարակություններով գործածության մեջ մնաց ավելի քան 30 տարի¹⁵:

Նա հայոց լեզվի դասագրքեր է գրել նաև ոչ հայկական դպրոցների աշակերտների համար¹⁶: Ուշագրավ է «Краткий курс армянского языка» ինքնուսուցման ձեռնարկը, որն առաջին անգամ հրատարակվեց 1944 թ., ապա ունեցավ մի քանի վերահրատարակություններ:

Բազմաթիվ դասագրքերի հեղինակը բնականաբար չէր կարող մեկուսի մնալ լեզվի դասավանդման մեթոդիկայի գիտական հիմունքների մշակումից: Եվ, իրոք, Ա. Ղարիբյանն իր գիտամանկավարժական գործունեության սկզբնական շրջանից մինչև վերջ եղավ ու մնաց նաև որպես գիտնական մեթոդիստ-խորհրդատու հայոց լեզվի ուսուցիչների համար: Գրեց տասնյակ հոդվածներ, ինչպես և գրքեր, որտեղ լուսաբանեց մեթոդական շատ հարցեր:

Հեղինակի շուրջ երկու տասնամյակի մեթոդական աշխատանքի ամփոփումը և բարձրակետը եղավ «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» աշխատությունը, որը հրատարակվեց 1954 թ.: Գրքում բուն մեթոդական բաժիններին ներածականի կարգով նախորդում են ընդհանուր հարցերի քննարկումներ: Այստեղ հեղինակն օգտագործում է լեզվի դասավանդման մեթոդիկայի, իբրև յուրահատուկ առարկայի բնույթի, իրավունքների, սահմանների, նրա մանկավարժական ու լեզվաբանական հիմունքների հարցերը, ապա հատուկ տեղ է տալիս ուսուցողական աշխատանքի ոլանավորման հարցերին,

¹⁰ «Խորհրդային գրականություն», 1939, № 2:

¹¹ «Ученые записки» Ереванского русского пединститута им А. А. Жданова, 1955, № 5.

¹² ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 2:

¹³ Նույն տեղում, 1960, № 7—8:

¹⁴ Առաջին հրատ.՝ «Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն. դասագիրք միջնակարգ դպրոցների համար. հինգերորդ դասարան», Երևան, 1934:

¹⁵ Վերջին հրատ.՝ «Հայոց լեզու. դասագիրք 6—7-րդ դասարանների համար», Երևան, 1964:

¹⁶ «Հայոց լեզվի դասագիրք. քերականություն և ուղղագրություն. ՀՍՍՌ ոչ հայկական դպրոցների 5—7-րդ դասարանների համար», Երևան, 1950: «Հայոց լեզվի քերականություն. դասագիրք ՀՍՍՌ ոչ հայկական դպրոցների 8—9-րդ և 10-րդ դասարանների համար», Երևան, 1950 և այլն:

նկատի առնելով ինչպես ծրագրով նախատեսված նյութերի քառորդային, նույնպես և դասերի պլանավորումը, բնորոշ կերպով սահմանում ու ներկայացնում է լեզվի դասի տարբեր տիպերը, կանգ է սռնում ուսուցման ընթացքում ուսուցչի կենդանի խոսքի, զրույցի, նյութի բանավոր շարադրման, հարցման, զանազան վերլուծությունների, նյութի մատուցման այլևայլ կարևոր եղանակների վրա: Սրանցով նա հող է նախապատրաստում հայոց լեզվի կառուցվածքային տարբեր կողմերին վերաբերող բազմազան իրողությունների ուսուցման մեթոդիկայի համակարգի ներկայացման համար: Ապա լեզվական որոշակի ու հարուստ նյութով շարադրում է հայոց լեզվի հնչյունաքանության, ուղղագրության, բառակազմության, ձևաբանության ու շարահյուսության ուսուցման մեթոդիկան: Զևաբանության մեթոդիկայի բաժնում մեկ առ մեկ տրվում են խոսքի մասերի ու նրանց հատուկ քերականական կարգերի ուսուցման եղանակներն ու մեթոդական հնարները: Շարահյուսության բաժնում ներառվում է տարբեր տիպի նախադասությունների ու նրանց կառուցվածքի ուսուցման մեթոդիկան: Որպես կանոն, հեղինակը նախ բացատրում է լեզվական իրողությունն իր էական կողմերով, ապա խոսում նրա ուսուցման մասին, այսինքն այն մասին, թե սովորողներին ինչպես պիտի մատուցել դրանք, ինչ արդյունավետ ուղիներով պիտի հասցնել աշակերտների գիտակցությանը և նրանց կողմից դրանց ճիշտ յուրացմանը: Դիրքն ամբողջաբանում է մի շատ կարևոր բաժնով, որը հատկացված է խոսքի ուսուցման մեթոդիկային:

Ա. Ղարիբյանն ուղիներ էր որոնում լեզվաբանական գիտությունը դրաբնորոշում մայրենի լեզվի դասավանդման արդյունավետության բարձրացմանն ի սպաս դնելու և այդպիսով հայ մանկավարժության մեջ մանկավարժական լեզվաբանության ուղղագրություն սկզբնավորելու համար: Նրա այդպիսի մտորումների արդյունքը հղավ «Հայ մանկավարժական լեզվաբանություն» աշխատությունը, որի I գիրքը լույս տեսավ 1969 թ.: Այստեղ ավելի ցայտունությունը են համատեղված լեզվաբանի և մեթոդիստի ջանքերը: Մինչ այդ, իհարկե, լեզվի դասավանդման մեթոդիկան թե՛ ընդհանրապես և թե՛ հեղինակի աշխատություններում կտրված չի հղել լեզվաբանական գիտությունից, սակայն այստեղ առավել շահով է ընդգծվում դրանց միասնությունը մեթոդական ամեն մի հնար խարսխվում է լեզվաբանական համապատասխան տեսության վրա, ուսուցումն առաջարկվում է լեզվաբանական տեսանկյունով, իհարկե, որքան որ հնարավոր է մատչելիացնելով: Անդրադառնալով մանկավարժական լեզվաբանության բնույթին ու նպատակներին՝ հեղինակը նշում է, որ լեզվաբանական տարբեր ուղղություններ ունեն տարբեր մեթոդներ և ուսումնասիրության վանազանվող նպատակներ: Նրա ձևակերպմամբ՝ «Մանկավարժական լեզվաբանության մեթոդը նորմավորված լեզվի օրինաչափությունների կադապարումները և դրանց համակարգումն է ուսուցման նպատակների համար»¹⁷: Ընդհանուր լեզվաբանական մի շարք հասկացությունների անդրադառնալուց հետո հեղինակը շարադրում է դպրոցական նորմատիվ քերականության կառուցման սկզբունքները:

¹⁷ Ա. Ղարիբյան, Հայ մանկավարժական լեզվաբանություն, գիրք I, Երևան, 1969, էջ 8:

Զի կարելի մոռանալ Ա. Ղարիբյանի ակտիվ աշխատանքը հայոց լեզվի զարգացական դասընթացի ծրագրերի ստեղծման ուղղությամբ:

Արժեքավոր է նրա վաստակը բառարանագրության ասպարեզում: Բառարանագրական նրա առաջին գործը ուղղագրական բառարանն էր, որը լույս տեսավ 1940 թ. և շարունակ վերափոխվելով վերահրատարակվում է մինչև վերջին տարիներս (վերջին հրատարակությունները՝ հեղինակակցությամբ): Մասնակցել է «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարանը» կազմելու աշխատանքներին (1941 թ.): Ե. Տեր-Մինասյանի և Մ. Գևորգյանի հետ կազմել է «Ռուս-հայերեն բառարանը» (1945 թ.), որը «պարունակում է բանավոր խոսքի և գրականության մեջ ամենից հաճախ գործածվող 28000 բառ»: Դրան հաջորդել է «Հայ-ռուսերեն բառարանը» (1947 թ.)՝ նույն ծավալով (դարձյալ վերջիններիս հեղինակակցությամբ), որն ընդարձակվել ու վերահրատարակվել է 1960 թ.: Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում Ա. Ղարիբյանը նախաձեռնեց ռուս-հայերեն մեծ բառարանի և ժամանակակից հայերենի բացատրական բառարանի ստեղծման աշխատանքները, որոնք հետագայում սպակեցին հաջողությամբ: Նրա բառարանագրական աշխատանքի գագաթը եղավ ընդարձակ միահատորյա «Ռուս-հայերեն բառարանը», որը հրատարակվեց 1968 թ.: Դա ընդգրկում է 85000 բառահոգված և շուրջ 100000 բառ ու դարձվածք, արտացոլում է ռուսերենի հետ առնչվող հայ բառարանագրության էական նվաճումները: Բառարանը որոշ լրացումներով վերահրատարակվել է, արժանացել ՀՍՍՀ պետական մրցանակի: Երախտավոր բառարանագիրն իր կյանքի վերջին տարիներին սկսել էր հայ-ռուսերեն ընդարձակ բառարանի կազմումը, որը, ցավոք, չկարողացավ ավարտի հասցնել:

Ակադ. Ա. Ղարիբյանի գիտական նշանակալից նախաձեռնումներից էր հայ հին մատենագրության համաբարբառի ստեղծման գործը: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի համակարգում կազմակերպվեց հայկական համաբարբառի բաժին՝ նրա գիտական ղեկավարությամբ: Մեկուկես տասնամյակի ընթացքում ստեղծվեց հարուստ քարտարան: Հատուկ մշակված մեթոդով քարտագրվեցին շուրջ 50 բնագրեր: Դրանց կեսի համար կազմվեցին համաբարբառներ, որոնք արժանացան մասնագետների ուշադրությանը, քսնի որ մեծ չափով օժանդակում են տարբեր ուղղություններով տարվող գիտահետազոտական աշխատանքների ծավալմանը: Համաբարբառները վեր են հանում մեր մատենագրության լեզվական ու բովանդակած համապատասխան նյութերի հարստությունները և դրանով իսկ ունեն գիտական-տեղեկատվական հսկայական նշանակություն: Սկսված այդ մեծարժեք աշխատանքը այժմ շարունակվում է:

Նշանավոր գիտնականի բուռն ու արգասավոր գործունեությունը անընկատ չի մնացել: Ա. Ղարիբյանը 1947 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1960 թ.՝ իսկական անդամ: 1954 թ. արժանացել է հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: 1969 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր զրոշի շքանշանով:

А. С. ГАРИБЯН

(К 80-летию со дня рождения)

Член-корр. АН АрмССР А. А. АБРААМЯН

(Резюме)

В статье характеризуется научно-педагогическая деятельность видного языковеда акад. АН АрмССР А. С. Гарибяна, начиная с тридцатых годов до конца жизни ученого (до 1977 г.). Широко известны труды А. С. Гарибяна по истории армянского языка, армянской диалектологии и лексикографии, по методике преподавания родного языка и др. Автор создал ряд ценных учебников и учебных пособий для средних школ и вузов.

В своих основных трудах А. С. Гарибян выдвинул многочисленные вопросы, имеющие важное значение для арменистики. Особенно велик его вклад в описание ряда новооткрытых армянских диалектов, установление новых ветвей («и», «իш», «շш»), пересмотр и расширение морфологической классификации диалектов, а также в создание типологической и фонетической классификаций. Ученый деятельно занимался организацией работ по составлению конкорданса древнеармянской литературы.